

Հայցվորի անունը  
Հայցվորի հասցեն  
Քաղաքը, CA  
փոստային ինդեքսը

### ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Հիմա, երբ ներկայացրել եք գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) հայց, Զբաղվածության զարգացման վարչությունը (Employment Development Department, EDD) պահանջում է գրանցվել աշխատանքի համար՝ օգտվելով Կալիֆոռնիա նահանգի առցանց աշխատանքի բորսայի CalJOBS<sup>SM</sup> համակարգից: Երբ Դուք ներկայացրեցիք Ձեր UI հայցը, EDD-ն սկսեց նախագրանցման մատյան վարել Ձեզ համար:

Դուք **21 օր ունեք՝ այս ծանուցագրի թվականից հաշված**, որպեսզի մուտք գործեք CalJOBS<sup>SM</sup> և լրացնեք գրանցման համար անհրաժեշտ տեղեկություններն ու ավելացնեք Ձեր համառոտ ինքնակենսագրությունը: Եթե նախկինում օգտագործել եք CalJOBS<sup>SM</sup>, ապա անհրաժեշտ կլինի թարմացնել Ձեր գրանցման տվյալները և ավելացնել ամենավերջին աշխատանքային կենսագրությունը:

Եթե նախկինում CalJOBS<sup>SM</sup> չեք օգտագործել, խնդրում ենք մուտք գործել [www.caljobs.ca.gov](http://www.caljobs.ca.gov) կայքը՝ օգտվելով օգտանունի ստեղծման հետևյալ եղանակից՝ Ձեր լրիվ ազգանունը, անվան առաջին սկզբնատառը և սոցիալական ապահովության քարտի համարի (Social Security number, SSN) վերջին չորս թվանշանները, ինչը կլինի Ձեր օգտանունը: Գաղտնաբառի համար օգտագործեք Ձեր սոցիալական ապահովության քարտի համարի վերջին չորս թվանշանները:

**ՄԻԱՅՆ ՕՐԲՆԱԿ.** Ձոն Սմիթի համար, ում SSN համարն է՝ XXX-XX-1234 (Դուք օգտագործելու եք Ձեր անունն ու SSN-ը):

Օգտանունը՝ Smithj1234  
Գաղտնաբառը՝ 1234

Առաջին անգամ մուտք գործելու ժամանակ Ձեզ կառաջարկվի փոխել ժամանակավոր գաղտնաբառը: Եթե չկարողանաք մուտք գործել կամ օգնության կարիք ունենաք, դիմեք ստորև նշված տեղական America's Job Center of California<sup>SM</sup> (AJCC) ծառայությանը:

### CALJOBS<sup>SM</sup>-ՈՒՄ ԶԳՐԱՆՑՎԵԼ ԿԱՐՈՂ Է ԲՍՅԱՍԿԱՐ ԱՋՐԵԼ ԳՈՐԾԱԶԳՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

CalJOBS<sup>SM</sup>-ում կարող եք ստեղծել որակյալ ինքնակենսագրական, որը կարող են դիտել գրանցված գործատուները: Դուք կկարողանաք դիտել բազմազան թափուր աշխատատեղեր Ձեր քաղաքի տարածքում կամ ամենուրեք Կալիֆոռնիա նահանգում և դիմել այդ աշխատատեղերի համար: «Աշխատանք փնտրողի ծառայություններ» (Job Seeker Services) բաժնում կարող եք ստեղծել «Վիրտուալ հավաքագրող», որն էլեկտրոնային փոստով կամ հեռապատճենով ինքնաբերաբար կտեղեկացնի Ձեր հետաքրքրություններին և նպատակներին համապատասխանող նոր թափուր աշխատատեղերի մասին:

- Կարող եք առցանց մուտք գործել CalJOBS<sup>SM</sup>՝ այցելելով [www.caljobs.ca.gov](http://www.caljobs.ca.gov) կայքը կամ Ձեր տեղական America's Job Center of California<sup>SM</sup> (AJCC) ծառայությունը՝ գրանցումը սկսելու համար: Եթե չունեք մուտք դեպի ինտերնետ կամ CalJOBS<sup>SM</sup> մուտք գործելու հարցում օգնություն է հարկավոր, այցելեք մոտակա աշխատանքի տեղավորման կենտրոն: Աշխատանքի տեղավորման կենտրոնները համակարգչային ռեսուրսների տիրույթ են առաջարկում աշխատանքի առցանց որոնումների համար, իսկ աշխատակազմը Ձեզ օգնում է այդ գործընթացի յուրաքանչյուր քայլում:

Ձեր տեղական AJCC գրասենյակի հասցեն և հեռախոսահամարը՝

Տեղական America's Job Center of California  
0000 Main St.  
Քաղաք, CA փոստային ինդեքս  
000-000-0000

*Կալիֆոռնիա նահանգի օրենսդրությունը պահանջում է, որ աշխատանքի տեղավորման ծառայությունների համար դիմող բոլոր անձինք, նախքան այդ ծառայությունները ստանալը, ներկայացնեն իրենց իրավական կարգավիճակը կամ աշխատելու թույլտվությունը հաստատող փաստաթղթային ապացույց: Ձեր գրանցումը տեղական աշխատանքի տեղավորման կենտրոնում կատարելու համար պետք է բերեք պահանջվող փաստաթղթերը: Կից տրված է ընդունելի փաստաթղթերը թվարկող գրքույկ:*

EDD-ն, որը հավասար հնարավորություններ տրամադրող գործատու կամ ծրագիր է, այս հրատարակության գործընկերն է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն վերը նշված համարով (ձայնային) կամ TTY 800-815-9387 զանգահարելու միջոցով: